



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99

P-12



01 JAN 2009

06 DEC 2009

ԽԱՀԱՏՈՒՐ ԲԱՐԱՅԵԱՆ.

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. Ռ. Ա. Զ Ի Ն Հ Ա Տ Ո Ր.



Թ Ի Ֆ Լ Ի Ս  
Տպարան „ՀԵՐՄԻՍ“, Միքայելեան փող., 81.  
1904

26 FEB 2013

22749



Գ. Ա. Ր Ո Ւ Ն.

Ահա եկաւ գարունը,  
Նորից չնչեց ողջ աշխարհ.  
Թափից աչքից իր քունը  
Բնութիւնը քնայար,

Սառ ձիւները հալվեցին,  
Եկաւ սիրուն ծիծեռնակ.  
Կանաչ գորգով ծածկվեցին  
Սար, ձոր, անտառ և ծմակ:

Ծառ ու ծաղիկ կանաչով  
Զարդարվեցին շուրջ բոլոր.  
Առուները խոխոջով  
Երդ հնչեցին մեղմոլոր:

Եւ բնութիւնն ամեն տեղ,  
Կապանքներից ազատված՝  
Դարձաւ մի դրախտ փառահեղ,  
Փարթամ ու ճոխ զարդարված:



4193 - 82

Սոխակն ուրախ ու զուարթ  
Հնչեց քնքոյշ գայլայլիկ,  
Եւ երգելով սիրած վարդ  
Զգաց իրան երջանիկ:

Տիրեց անվերջ խնդութիւն  
Դալարագեղ դաշտերում,  
Եւ անուշիկ ճռողիւն  
Կանաչաւէտ մարդերում:

Զարթնեց սէրը նոր թափով  
Մարդկանց թմրած սրտերում,  
Եռաց կեանքը եռանդով  
Խորաթափանց նեարդերում:

Մ Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն.

Սիր, անուշիկ իմ մանկութիւն,  
Ուրբան քաղցր է քո անուն,  
Կորաւ անդարձ քո քաղցրութիւն  
Եւ իմ անմեղ, անհոգ քուն:

Քանի դեռ նենդ մարդկանց խաղեր  
Զէի տեսել ևս կեանքում,  
Ժպտում էին ինձ վառ աստղեր  
Զինջ կապուտակ երկնքում:

Մշտադալար ճոխ բնութիւն  
Ինձ շոյում էր իր գրկում,  
Բուրում էին անուշութիւն  
Շուշան, մեխակ և քրքում:

Սակայն երբ ես ճաշակեցի  
Համը կեանքի գառնութեան,  
Այն ժամանակ ես քամեցի  
Բաժակն անվերջ հեծութեան:

Աւաղ, անցան մանուկ օրեր  
Այնպէս արագ ու վռազ,  
Որ անցեալի ուրախ ժամեր  
Ինձ թւում են մի երազ:

ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ՀԵՌԱՆԱԼԻՄ.

Սրբէն ծածկվեց հայրենիքս  
Հորիզոնի յետևում,  
Որտեղ թողի սիրելիքս  
Մտածմունքի խոր ծովում:

Նրան, որին պատահել է  
Հայրենիքից բաժանվել,  
Յայտնի է, թէ որքան ծանր է  
Սուրբ վայրերից անջատվել:

Դառն է ժամը, երբ պիտ' թողնեա  
Օրօրանը պապերիդ,  
Որպէս նաև այն վայրկեանը,  
Երբ էլ չը կայ սիրելիդ:

Հեռն, հեռն հայրենիքից  
Թոչել էի ևս ուզում  
Եւ անողաք, չար տանջանքից  
Ազատութիւն երազում:

Այնտեղ, հեռն, պանդուխտ երկրում,  
Ես շատերից մոռացված՝  
Անգոբութիւն էի փնտրում,  
Իմ վշտերից հալածված:

Սակայն, աւազ, ուր էլ գնանք,  
Զենք ազատվի տանջանքից,  
Քանի կեանքը բաղկացած է  
Վշտի անվերջ հիւսվածքից:

ՀԱԿԱՅ ԾԱՌՈՅ.

Հակայ կանաչ ծառ էր կանգնած  
Ծովի ափում՝ լեռան գիմաց...  
Անթիւ, անվերջ փոթորիկներ  
Եւ կատաղի, գաժան հողմեր  
Եկան, անցան նրա գլխով՝  
Միշտ, շարունակ հարված տալով:

Ծառի մօտով անցան նաւեր  
Եւ նաւերով լողող բեռներ...  
Անգութ, անխիղճ ուղևորներ  
Կարասեցին նրա ճիւղեր,—  
Ճղնակոտոր արին նրան  
Եւ ճիւղերը հեռու տարան:

Թարմ ոստերը խոցոտեցին,—  
Ծնող մօրից բաժանեցին...  
Նախկին հսկան խոր սուզ մտած  
Եւ վեհ տեսքից տպեղացած՝  
Կանգնած է լուռ ծովեղերքին,  
Աւաղ տալով անցեալ փառքին...

Գ Ե Տ Ի Ա Փ Ի Ն.

Ստախովով անուշ ձայնով  
Կարկաջահոս գետն էր հոսում,  
Նրա մէջից, միշտ խայտալով՝  
Բնութիւնն էր անվերջ խօսում:

Գետի ափին կանգնած էին  
Շարքով տնկած խիտ ուռիներ.  
Նրանք, կարծես, յոգնած էին  
Գլորելով շատ տարիներ:

Գլուխները լուռ խոնարհած՝  
Լալիս էին ջրի վրայ,  
Որ տանում էր նրանց թափած  
Արցունքները միշտ անխնայ:

Ծեր արտասվող ուռիները  
Ողբում էին գետեղերքում,  
Իսկ անտաշը ալիքները  
Լողում էին նրանց գրկում:

Գետի այն կողմ կար մի անտառ  
Բարձրահասակ սոսիների,  
Ուր լսվում էր և մերթ կայտառ  
Սօսաւիւնը տերեների:

Երբ թափում էր փայլը վերջին  
Ուկէ արփին երկնաբնակ,  
Թոչունները նրանց մէջին  
Երգում էին քաղցրանուագ:

Ալիքները, ձայնակցելով  
Թոչուններին միշտ ներդաշնակ,  
Վազում էին՝ մեղմ հնչելով  
Վերջալուսի սիրուն դաշնակ:

Գետի ափին վաղուց ընկած  
Կար մի մռայլ քարաժայոիկ,  
Ուր այդ ժամին ես, վշտացած  
Սիրում էի նստել լոիկ:

ՄԵԾ ՄԱՐԴԿԱՆՑ ԿԵԱՆՔՀ.

Ամեն անգամ, երբ կարդում ես  
Անցըած կեանքը մեծ մարդկանց,  
Միշտ մտատանջ մտածում ես,  
«Կը նմանվե՞ս դու նրանց»:

Թոչում, սլանում ես մտքով  
Դէպի նբանց հայրենիք,  
Ուզում ես բանալ անվրդով  
Նրանց կեանքի վեհ գաղտնիք:

Բայց անկարող գէթ հասնելու  
Ոլիմպիական բարձրութեան՝  
Ստիպված ես խոնարհելու  
Նրանց անմահ վեհութեան:

ԴԻՇԵՐՈԹԻԿ ԴՊՐՈՑԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒՑ ՅԵՑՈՅ.

Սի տարի առաջ ես բանտումն էի...  
Փակված չորս կողմից նրա լայն բակում,  
Եւ ազատութիւն փափագում էի,  
Ինչպէս մի թռչնիկ՝ փակված վանդակում:

Սակայն ես հիմա այնտեղ չեմ լինում...  
Արդէն ընտրեցի ահեղ կուի դաշտ.  
Կեանքի ծովի մէջ իմ նաւն եմ վարում,  
Մրրիկների հետ կուելու անհաշտ:

Երբ մտածում եմ անցեալի վրայ  
Կեանքիս գէպքերը զարթնում են նորից.  
Տարված, մոլորված մտքով անխնայ՝  
Կաշկանդվում եմ ես մի ծանր բեռից:

Իմ յիշողութեան ծալքերի մէջին  
Անցեալ գէպքերն են ննջում խոր քնով,  
Մինչև մի առիթ, կամ գէպքը վերջին՝  
Կրկին զարթնելու բնական կարգով:

Յիշատակները դառն անցեալի  
Անսահման կերպով միտքս են յուղում.  
Զգում եմ ես ինձ տիսուր, վշտալի,  
Նորից եմ նրանց մոռանալ ուղում:

1895 թ. 30-ն ապրիլի.

Ա. ԳԷՈՐԳԻ ՎԱՆՔՈՒՄ.

Ով նուիրական, գնա սրբատեղի,--  
Անթիւ անցքերի կենդանի վրայ,  
Յուղում ես մարդկանց արցունքը աղի,  
Երբ լուռ նայում են նրանք քո վրայ:

1894 թ. 21-ն ապրիլի  
Մուղնի:

Ա Ն Ց Ա Ծ Օ Ւ Ե Ռ.

Ժամանակի քողը պատեց  
Կեանքիս անցած օրերին,  
Անդառնալի և շուտ յանձնեց  
Անցեալ հին-հին դարերին:

Նրանք թէկ անհետացան,  
Իսպառ կորան իմ աչքից,  
Բայց իրավէս նրանք չ'անցան  
Յափշտակող դարերից:

Հին դարերի խոր ծակքերում  
Նրանք մի տեղ կը բռնեն  
Եւ կարևոր շատ գէպքերում  
Անբախտ կեանքս կը պատմեն:

ՊԱՆԴԻՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ.

Տիուր սրտով ես թողեցի  
Իմ սիրասուն հայրենիք.  
Օտար աշխարհ ես գիմեցի  
Անտուն, անտէր, անկնիկ:

Սակայն, աւաղ, անգութ բախտը  
Ինձ չը ժպտաց և այստեղ.  
Ե՞րբ էք տեսել, որ անբախտը  
Ուրախանայ գէթ մի տեղ:

Նա մեզ իրան գերել կը տայ  
Իր հրապոյրով խարուսիկ.  
Նա անխիղճ է և խաբերայ  
Իր ժպիտով վաղանցիկ:

Ի Մ Հ Ր Ա Ժ Ե Շ Տ.

Մնաս բարեաւ, գուցէ ընդ միշտ,  
Քաղցր քոյր իմ հարազատ.  
Հալածում է ինձ ծանր վիշտ  
Կեանքի ծովում անազատ:

Մնաս բարեաւ, և դու Մասիս,  
Իմ հայրենեաց յիշատակ,  
Ես գնում եմ դէպի հիւսիս,  
Կի վշտերով անյատակ:

Իմ հայրենեաց լոիկ վայրեր,  
Դեռ քնած էք խոր քնով.  
Օրօրեցին ձեզ մեր հայրեր  
Քաղցր քնի տաղերով:

Քանի՞ որդի ճամպու դրիք  
Դէպի օտար երկրներ.  
Անգութ կերպով անտես արիք  
Նրանց թափած արցունքներ:

Նրանք ծնված ու մեծացած  
Զեր հիւրընկալ գրկի մէջ,  
Այժմ օտար վայրեր ընկած՝  
Տառապում են միշտ, անվերջ:

Կեանքի անթիւ վոթորիկներ  
Ինձ ևս ծով նետեցին,  
Ուր կատաղի, գոռ ալիքներ  
Զեռք ու ոտս կապեցին:

Անսիրտ մարդիկ ինձ նայեցին  
Անկարեկից հայեացքով,  
Ինձ աւելի խոր խոցեցին  
Իրանց տմարդ վարժունքով:

Բայց ո՞վ կը զգայ մեր տանջանքը  
Խիտ լեռների յետեկից,  
Եւ կը լսի հառաջանքը,  
Երբ գալիս է նա հեռուից:



Ես առաջ ու հայութ պատրի  
մենք առաջ ու հայութ պատրի  
առաջ պատրի պատրի առաջ  
պատրի առաջ ու հայութ

### Կ Ե Ա Ն Ք Ի Ծ Ո Վ Ը.

Կեանքի մռայլ ու սկ ծովում  
ես թոյլ, անյոյս թեկով  
Օրօրվում եմ և տատանվում,  
Դանդաղ առաջ լողալով:

Երբ այն օրից ես ծնվեցի,  
Ալիքների մէջ մռայ,  
Ուրախութիւն որոնեցի,  
Բայց կեանքի մէջ չը գտայ:

Կեանքը փշոտ է և տատասկոտ,  
Թշուառութեամբ լի ու լի.  
Նրա ուղին՝ միշտ քարքարոտ,—  
Շատ տանջանքներ նա ունի:

### Յ Ո Ւ Զ Վ Ա Ծ Ս Ա.

Ո՞հ, ձնշվում է սիրտս վշտուս  
Հեգ, վշտարեկ իմ կրծքում.  
Ել չի կարող լինել թունոտ,—  
Դուրս թոշել է կամենում...

Հանգստացիր, ով դու սիրտ իմ,  
Թոնդ յուզմունքդ թունալի.  
Առանց այն էլ ես բախտ չունիմ,  
Սնրախտութեամբ կեանքս է լի:

Միթէ դու չես կարող տանել  
Տառապանքի ծանր խաչ,  
Եւ այգաէս շնուր կ'ուզես ընկճվել  
Դաժան խաչի դու առաջ...

Բայց դու կեանքի ծանր ժամին  
Արիալար համբերիր.  
Սպասելով արշալոյսին  
Յոյսդ կեանքից մի կտրիր:

Ա Յ Գ Ռ Ի Խ Մ Ե Զ.

Աստած էի գեղեցկանիստ  
Եւ ծաղկաւէտ այգու մէջ.  
Կենարոնացած իմ մէջ հանգիստ  
Խորհում էի ես անվերջ:

Մշտախոխոջ գետն էր հոսում  
Սովորական իր շաւղով  
Եւ քաղցրաձայն օրօր ասում,  
Իմ խոհերը տանելով:

«Շատ մի տիւրիր, ով անցաւոր»,--  
Կարծես, մի ձայն ինձ ասաց.  
«Միթէ մեզ մօտ հէդ սպաւոր  
Պէտք է լինի միշտ նստած»:

Ի Մ Ք Ն Ա Ր Ի Ն.

Հնչիր տիսուր և մեղմագին,  
Ով դու քնար իմ անգին.  
Ոյժ տուր լուած նուրբ լարերիդ,  
Քաղցրահնչին թելերիդ:

Եղիր կցորդ դու երգերիս  
Եւ մասնակից՝ վշտերիս.  
Իմ վշտերը մեծ ծով դարձած,  
Դուրս պիտ' ժայթքեն դառնացած:

Դէհ, մի լոփր, հնչիր գողտրիկ,  
Ով դու քնար իմ քաղցրիկ.  
Շնչնչ տուր քնած քո լարերին  
Եւ ձայն՝ լուած երգերին,

ԱՄՊԱՄԱԾ ԵՐԿԻՆՅ.

Երկինքն է ամպած,  
Գլշերը՝ մթին.  
Թախծով է պատած  
Պօէտի հոգին:

Սև քող է ծածկել  
Համայն բնութիւն,  
Եւ իսպառ կորել  
Ծիծաղ, խնդութիւն:

Յուզված է սաստիկ  
Սիրոը պօէտի.  
Չը կայ գեղեցիկ  
Ժպիտը դէմքի:

Ա Ղ Բ Ի Խ Ռ Ի Մ Օ Տ.

Ես լուռ նստած աղբիւրի մօտ՝  
Նայում էի պարզ ջրին.  
Վճիտ չուրը ակից քարոտ  
Խվզում էր լեռ ափերին:

Մշտախովոջ անուշ ձայնով  
Նա հոսում էր գէպի ցած.  
Ալիքները մշշտ խայտալով  
Վազում էին պար բռնած:

Ես մտախոհ լսում էի  
Անուշ խոխոջն աղբիւրի  
Եւ նրա մէջ փնտրում էի  
Լոկ սփոփանք վշտերի:

Եւ մինչդեռ ես նայում էի  
Ալիքների այդ պարին,  
Սիրոս ներսից, զզում էի,  
Վիշտն էր պատմում աղբիւրին:

Չ'անցաւ մէկ ժամ, ես վեր կացայ  
Դէպ' օթևան գնալու.  
Վշտի բեռից թեթևացայ,  
Կարծես, էլ չեմ տխրելու:

ՍԻՐԱՀԱՐԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԻՑ.

Կեանքիս մէջը ես մի օրիորդ սիրեցի,  
Որին ազատ սէրս յայտնել ուղեցի.  
Բայց նա անգութ վերաբերվեց իմ սէրին,  
Որ վատ ազդեց սրտիս քնքոյշ լարերին:

ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ.

Հեռացել եմ հայրենիքից  
Եւ մոռացվել ամենքից.  
Այստեղ տխուր և յուսահատ  
Կեանքս է սահում անընդհատ:

Զը կայ գոնէ մի սիրա ցաւող  
Եւ իմ վշտերն ամոքող.  
Լուռ տանջվում եմ սրտիս խորքում,  
Գիշեր-ցերեկ մորմոքում:

ԵՍ ԶԵՄ ԵՐԳՈՒՄ. ԵՐԳԻ ՈՒԽՄ.

---

Ես չեմ երգում... բայց մի կարծէք,  
Որ ես չար եմ իսկապէս.  
Իմ վշտերը, լու իմացէք,  
Շատ անհուն են և պէս-պէս:

Ի՞նչպէս երգել, երբ օձ վշտից  
Վէրք է բացվել իմ սրտում,  
Եւ այդ վէրքի պատովածքից  
Իմ արիւնն է միշտ ցայտում:

ՎԵՏ ՏԻՄ ԹՈՅ ՅՆ ՀԱՅ.

---

Եւ չի կարող սիրոս տաճել  
Դառը կեանքի այս անհուն վիշտ,  
Այլ ուղում է նրան վաճել  
Իր խորշերից հեռու ընդ միշտ:  
Եթէ երգեմ այդ միջոցին,  
Որ գէթ երգով հանգստանամ,  
Կամ թէ դիմեմ անմիտ լացին,  
Որ գէթ լացով թեթևանամ.—  
Երդ ու լացս կը լինեն թունոստ  
Եւ լսողը կը վշտանայ:  
Վշտոս սրտի երգն է մաղձոտ,  
Որին քարն էլ չի դիմանայ:

Եմին և զայր մայմ զոյն  
Քայն լեռնեն մանուն մզոյն  
Լեռու հայր հայր առյունն  
Մայն հայուն մայր են մայմն

Ո հ Ս Ո հ Յ Ի Զ.

Սահատակի խաչը ուսին  
Եւ ողջ կեանքը - վիշտ, տառապանք՝  
Ծառայում է նա իր ազգին  
Ու վայելում անհուն զրկանք:

Նա գործում է անակնկալ,  
Հանուր շահին անձնանուեր,  
Եւ մարմնացնում ձգտում, իդէալ՝  
Տարածելով լոյս կենսաբեր:

Նա տանում է մեղ դէպի լոյս,  
Ճշմարտութիւն միշտ սերմանում,  
Վարձատրութեան կողմից անյոյս՝  
Ազնուութիւն սովորեցնում:

Իրօք նրան պէտք է սիրել,  
Իբրև ուսման անխոնջ մշակ,  
Որ միշտ գիտէ անշէջ պահել  
Աստուածային շնորհի կրակ:

Մ Ե Ռ Ա Ծ Կ Ե Ա Ն Ք.

Որտեղ մարդիկ մանրանում են,  
Շրջան չը կայ մեղ համար,  
Այնտեղ ծնվում և մեռնում են  
Մեր վեհ մտքերն անհամար:

Որտեղ չը կայ եռանդ, աւիւն,  
Կեանքն է մեռած և դժոյն,  
Այնտեղ մարդն է միշտ սառնարիւն,  
Սաստիկ տմարդ և անգոյն:

Որտեղ չը կայ կենդանութիւն  
Շրջապատող կեանքի մէջ,  
Այնտեղ անշարժ մեռելութիւն  
Պէտք է տիրի միշտ, անվերջ:

( էլ մի փնտրիր մեռած կեանքում  
Վեհ իդէալներ մարդկային,  
Ինչպէս խաւար, մութ երկնքում  
Վառ լապտերներ երկնային: )

ՀՈՂԱՆԻՒԹԻՄ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ.

Բաղմառիթ վիշտը վամպիրի նման  
ծծում է արիւնն իմ կենդանութեան.  
Հիւծվում է շքնքը ողջ հողանիւթիս,  
Գերեզման տանում թշուառ անբախտիս:

«Ինչու ես հիւծվում, հողային դանդված,--  
Տիեզերքի չքնաղ, հրաշալի՛ շինված.  
Հիւլէ ես եղել և դարձեալ նորից  
Բաժանվել կ'ուղես իմ թշուառ մարմնից»:

«Հիւլէ էիր դու, հիւլէ էլ դարձիր,  
Անգութ մարդկանցից հեռն սլացիր.  
Եւ այս աշխարհի էակների մէջ  
Պահյա կազմիր դու և շրջիր անվերջ»:

Տ Խ Ո Ւ Ւ Մ Տ Ա Ծ Ո Ւ Ւ Կ Ն Ք.

Ես Է Ո ւ որպէս մի նահատակ,  
Պէտք է կորչեմ այս աշխարհից.  
Ես Է Միթէ անյիշատակ  
Պէտք է մնամ լաւ գործերից: )

Հապա ինչու կուտակվում են  
իմ մտքի մէջ վեհ իդէալներ,  
Եւ շարունակ բորբոքվում են  
Ապագայի քաղցրիկ յոյսեր:

Հապա ինչու ես շարունակ  
Պէտք է կըեմ վիշտ, տառապանք,  
Եթէ իրօք անփառունակ  
Պիտ՝ ժառանգեմ անհետք մի կեանք:

Թէ պիտ՝ գնան, կորչեն իզուր  
Այդ բոլորը իսպառ անհետ,  
Սակայն երբէք չի կորչի զուր  
Շառ մտքերից անունս գէթ:

Հ Ի Ն Տ Ա Ր Ի.

---

Տարաւ իր հետ անդառնալի  
Մեր յոյսերը ոսկեզօծ,  
Սակայն մեր միտքն անդրդվելի  
Պէտք է կազմի նոր ամրոց:

Ն Ո Ր Տ Ա Ր Ի.

Անկանգ ժամանակ, դու, անիւ շարժուն,  
Անսայթաք կերպով շըջան կազմեցիր  
Եւ դէպի խորին անսահմանութիւն  
Մի տարի ևս դու գլուեցիր:

Զը կայ հին տարին, նա կորաւ անդարձ,  
Նրա տեղ հիմա նորն է մեր առաջ.  
Ել չը կայ հսկն կրկին վերադարձ,  
Արդէն արձակեց նա վերջին հառաչ:

Քանի՛ թանկագին ժամեր մեր կեանքից,  
Խլեց, անջատեց և տարաւ իր հետ,  
Եւ քանի՛ ոսկի յոյսեր մեր սրտից  
Նա անդարձ խլեց և փշրեց անհետ,

Ո Ւ Ն Ա Յ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն .

Ինչու այդպէս անցան իզուր  
Բոպէները մեր կեանքի,  
Թռան, անցան, բայց արդեօք ուր,  
Վայրկեանները այդ ոսկի:

Եյն ժամանակ, երբ տեսնում ենք,  
Որ մեր կեանքն է անօգուտ,  
Մենք ակամայ ցանկանում ենք  
Մեր վախճանը մօտալուտ:

ԿՈՒԶԵՒ ԼԻՆԵԼ ՄԻ ՇՐՋԻԿ ՀՈԳԻ.

Կ'ուզէի լինել մի շրջիկ հոգի,  
Թափառել անվերջ քաղաքից քաղաք  
Եւ լսել ձայնը արդար բողոքի,  
Որպէս օգնութեան կանչող աղաղակ:

Օ՛, այն ժամանակ ես կը յայտնէի  
Գաղտնի վշտերը տանջվող մարդկութեան.  
Գուցէ այդպէսով ես կը յանձնէի  
Տիրող ցաւերը լուրջ բժշկութեան:

Քանի՛ և քանի՛ ողբերգութիւններ  
Լուր կատարվում են կեանքի մէջ ծածուկ,  
Որոնց մասին մենք տեղեկութիւններ  
Չենք լսում երբէք նոյն իսկ կամացուկ:

Ի Մ Լ Ա Ց Հ.

Ես լալիս եմ սրտիս խորքից,  
Բայց արտասոռնը չի թափվում.  
Հառաչում եմ հոգուս ներսից,  
Բայց ոչ մի ձայն չի լավում:

Ի Մ Թ Ա Խ Ի Ծ Հ.

*Ձ* **Մ**այլ է դէմքս, մոայլ՝ իմ հոգին,  
Յուղված է սիրտս վշտերից ուժդին.  
Տանջվում եմ անվերջ ծանր մտքերից,—  
Հեռու չեն գնում նրանք ինձանից:

ՈՒՍՈՒՑՉԻ ՀՐԱԺԵՇՏԸ.

Ահա, տալիս եմ ձեզ վերջին բարես,  
Գուցէ թէ միմեանց չը տեսնենք այլ և  
Սիրուն սանիկներ, հոգնւս հատորներ,  
Զեղնով պիտ' կորցնեմ ինձ սիրող սրտել

Թէև ձեզանից ես հեռանում եմ,  
Բայց իմ յիշատակն ես ձեզ թողնում եմ  
Ես սերմանեցի, որքան կարացի,  
Աղնիւ, ճշմարիս սերմեր գեղեցկի:

Այժմ մնում է ձեղ՝ պտղաբերել,  
Մէկի փոխարէն հարիւր արտադրել.  
Թէ ինձ կը սիրէք, աւանդս պահէք.—  
«Զեր սերմանացանին մտքից չը հանէք»:

Ի Մ Ս Ի Ռ Տ Ը.

Օովը մեծ է, լայն ու խորին,  
Ալիքներով կատաղի.  
Միշտ խփելով լուռ ափերին՝  
Զայն է հանում մետաղի:

Բայց ափերը միշտ լուռ ու մունջ  
Հանդիսատես այդ խաղին՝  
Չեն արձակում երբէք տրտունջ  
Անմիտ ծովի ծիծաղին:

Այսպէս և իմ լի ծով սիրտը  
Մրրկվում է մոլեղին,  
Որ չը գիտէ անսիրտ մարդը  
Գոռ փոթորիկն այդ ներքին:

Բայց մրրիկը տանջվող սրտի  
Սոսկալի է, քան այն մեծ  
Փոթորիկը հսկայ ծովի  
Վնասներով մեծամեծ:

«Իսկ իմ սրտի նուրբ լարերը  
Ի՞նչպէս դէմ տան ու կռւեն».  
Մրտիս քնքոյշ սիւն-պատերը  
Գուցէ շուտով պատառվին...

ԹՈՅԼԻ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ.

Ուժեղից յաղթված՝  
Մտայ գերեզման,  
Սյու էր վիճակված  
Ինձ վերջին կայան:

Վ Շ Տ Ա Բ Ե Ռ Ը.

Ես յանձնում եմ իմ վշտերը  
Արագ հոսող գետերին,  
Որ տանելով վշտիս բեռը՝  
Խփեն ժայռոտ ափերին:

Եթէ նրանք չը վերցնեն,  
Ես կը յանձնեմ ծովերին,  
Որ կատաղած տանեն, բերեն,  
Խփեն իրանց ափերին:

Թէ նրանք էլ չը վերցնեն,  
Ես կը յանձնեմ լեռներին,  
Որոնք նրանց լուռ կը յանձնեն  
Իրանց ընկեր ամպերին:

Իսկ ամպերը երկնասլաց  
Նրանց հեռու կը տանեն.  
Ես այդ բեռից թեթևացած՝  
Նորից կեանքը կը սիրեմ:



## Յ Ա Յ Ա.

Կ'անցնի մեր օրը, ինչպէս էլ լինի,  
թէ ուրախութեամբ և թէ թոյնով լի.  
Ուստի չը պէտք է մենք լինենք անյոյս,  
Ել միշտ իրարու պէտք է տանք խրախոյս:

Յոյսն է, որ մարդուն շունչ կեանք է տալիս,  
Մարդն առանց նրան սգում է, լալիս.  
Նա է իսկապէս մարդկանց ապրեցնում  
Եւ մագնիսաբար հեռուն ձգտեցնում:

Գնահատեցէք մարդկանց յոյսերը,—  
Նրանց հէզ կեանքի ամուր սիւները.  
Դատապարտութեան արժանի է նա,  
Յուսահատութեան ով տեղիք կը տայ:

## ԵՍ ՀԵՌԱՑԱՅ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ.

Ես հեռացայ հայրենիքից  
իդէալներով տոգորված՝  
իրագործման ծանր մտքից  
իսպառ սաստիկ մոլորված:  
Թէպէս ես էլ կարող էի  
Մնալ այստեղ և գործել,  
Ոգեորված սկսէի  
Ազատօրէն մտածել.  
Բայց ես, աւաղ, չէի կարող,  
Զգտումներիս հակառակ՝  
Մնալ ճահճում, լինել վատնող  
Վսեմ ձիրքը երկնառաք:

Եռնեմ ոչ մի տեղ գիշեր ու ցերեկ հանգիստ և դա-  
դար,  
Եյսպէս շարունակ տանջվում եմ անվերջ, տանջվում  
անդադար:

Ա Ն Հ Ա Ն Գ Ի Ս Հ Ո Գ Ի .

Ես դեռ չը գտայ և ոչ մի անգամ իմ անմիտ կեան-  
ինչու, բնութիւն, անհանգիստ հոգի դրեցիր իմ մէլլութիւնների և յիմարութեան այս անվերջ շար-  
քում,—  
Որ այսպէս, ես միշտ դժգո՞ն իմ կեանքից՝ տառ  
Սիրոս չէ սիրում դադարել մի տեղ և հանգստանա-  
պեմ անվերջմ տանջված հոգուն գէթ մի հանգիստ տեղ, —մի  
Այլ միշտ ուզում է թոչել, հեռաւոր վայրեր սլանաթրտեղ և լինէր իմ այս տանջանգին մի դեղ ու  
դարման:

Անհուն բաղձանքով գնում եմ ես իմ վրափագած մ  
Մակայն փախչում եմ շուտով այնտեղից գէպի ունել իմ հողեղին մաշվող զանգվածը կ'իջնի գերեզման,  
Եյսպէս անհանգիստ և աստանգական թափառու  
Որ ես մոռանամ բնասուր պարզե իմ այս ծանր  
սիրուլ  
եմ միշտեւ կը չքանան այս իմ անհանգիստ կրքելն ու  
վիշտը:

Բնութեան փարթամ և ազատ գրկում կամ հալածա-  
կարծես, թէ միշտ ինձ հալածում է մի անքուն ուր-  
ուական

Խ Ե Լ Ա Գ Ա Ր Ի Ն.

Երբ հոգեկան վիշտն ահարկու  
կեանքիդ ծառն է սղոցում,  
Քեղ ծաղրում է մի խաղարկու  
Աղմկաշատ փողոցում:

Բայց անտարբեր շարունակիր  
Քայլամոլոր քո ուղին.  
Սրտիդ մէջը պարունակիր  
Արհամարհանք ծաղրողին:

Եթէ այսօր ուրիշներին  
Նա ծաղրում է անդադար,  
Կեանքի վերջին բոպէներին  
Ծաղր կ'ուտի նա արդար...

ԿԵԱՆՔԻ ՎԵՐՁԱԼՈՅԱԸՆ.

Սրբակողում, մարած դէմքով,  
Նստած էր հէզ ծերունին.  
Ափսոսում էր, տարված մտքով,  
Կեանքի կայտառ օրերին:

«Տերողորմեան» մերթ ձգելով,  
Անցած կեանքն էր նա հաշւում,  
Եւ մերթ մահը միտ բերելով  
Նա տիւրում էր ու մաշվում:

Լրած կեանքի վերջալուսին՝  
Մարող կեանքն է առկայծում.  
Այդպէս նաև լրած լուսին  
Փայլն է բարձրից վէր ածում:

ԲԱԼԵՏԻ ՀԱԼԱԾԱՆՔԸ.

❖  
Բախտից երկար հալածվեցի  
Երկրից երկիր թափառելով.  
Անհուն տանջանք ես կրեցի՝  
Որոնածո չը գտնելով:

\* \*

(Նույր օրինակ Ս. ին):

Թաէ անցաւոր կեանքի բեմից  
Կեանքդ ու հոգիդ կը թուշեն,  
Մի գերեզման մարմարիոնից  
Արցունքներս կը թրջեն:



ՄԵՌԱԾ ՀՆԿԵՐԻՄ ԴԱԳԱՂԻ ԱՌԱՋ.

Ահա իմ առաջ մի անշուք դադաղ.  
Բայց ով է ննջում նրա մէջ, աւաղ.—  
Դաժան օրերի ընկեր թանկագին,  
Երբ ես սիրավառ, չունէի դեռ կին,  
Չար բախտից էի անվերջ գանգատվում  
Եւ սիրոյ համար գալտնի արտասլում,  
Նա, որպէս մի լոյս իմ մռայլ կեանքում,  
Կամ փայլուն մի աստղ կապոյտ երկնքում,  
Սփոփում էր ինձ միշտ իր այցերով:  
Երբ ես շատերից իսպառ մոռացված  
Եւ անգութ բախտից սաստիկ հալածված՝  
Իմ ծնունդն էի անվերջ անիծում  
Եւ այս աշխարհի վրայ մոտածում,  
Ողբում իմ անգին, բեկված իդէալներ,  
Ինչպէս խորտակված նաւի բեկորներ,  
Նա, որպէս ընկեր, ազնիւ, մտերիմ,  
Դժբակս դէպքերում միշտ հաւատարիմ,  
Ինձ յոյս էր տալիս՝ ընկճվել կեանքում,—  
Լինել անվեհեր գոյութեան կուռում:

«Ինչո՞ւ քո կեանքը դու չես ափսոսում»,—  
Խրատում էր ինձ և յաճախ ասում.  
«Զը պէտք է տանջել մեր միտքն անօգուտ,  
Մարդիկ այդպէսով դառնում են անգութ:  
Նայիր աշխարհին քննադատօրէն,  
Բայց միայն դատիր տրամաբանօրէն.  
Ասսուած չէ երբէք աշխարհն անիծել,  
Այլ դաժան կեանքը մարդն է ստեղծել:  
Թող մարդիկ իրանք զուր չը գանգատվեն,  
Ինչ ստեղծեցին, այն թող վայելեն»:

«Միայն մեզ համար լոկ չեն սահմանված  
Բնութեան օրէնքներն՝ անգութ համարված:  
Ունեցիր դու միշտ միտք խորաթափանց,  
Հոգեբանօրէն վերլուծիր մարդկանց:  
Աշխարհն է մի բեմ, փուչ և անցաւոր,  
Որտեղ ապրել են մարդիկ բիւրաւոր.  
Բայց այժմ նրանց հետքն անգամ չը կայ,—  
Այսպէս եկել է, այսպէս էլ կ'երթայ,  
Այսպէս անհամար մարդիկ հող դարձան  
Եւ կեանքի բեմից իսպառ չքացան»:

Գ Ա Ր Ո Ւ Ն.

Կանգնած էի սարի լանջին,  
Նայում էի դէպի վեր.  
Հասնում էին իմ ականջին  
Բնութեան թովիչ դայլայներ:

Այստեղ, բարձրում, սարի զլխին.  
Սէդ արծիւն էր սաւառնում,  
Իսկ ներքեռմ, սարի տակին  
Զինջ առուակը՝ պար բռնում:

Հագել էին դաշտ ու հովիտ  
Կանաչ դգեստ հոտաւէտ.  
Այն դարուն էր ծաղկափթիթ,  
Մի վառ դարուն խնկաւէտ:

Ես էլ էի ոտս դրել  
Կեանքիս սիրուն գարնան մէջ  
Եւ յոյսերս հեռուն ուղղել  
Վառ կըսկով մի ահշէջ:

Բայց բնութեան վեհ գարունը  
Ունի մի խաղ կրկնվող,  
Իսկ իմ կեանքի այդ շրջանը  
Զէ այլ անդամ նորոգվող:

ԵՍ ԿԱՐԾՈՒՄ ԵՄ ԻՆՉ ՄԻԱՅՆԱԿ.

Երբ շրջում եմ մեծ քաղաքներ,  
Կեանքով լցուն, բազմաբնակ,  
Կամ ամայի աւելրակներ՝  
Միշտ կարծում եմ ինձ միայնակ:

Երբ ընկնում եմ խնճոյքի մէջ,  
Ուր հիւրեր կան բազմաքանակ,  
Եւ ուր խինոն է, կարծես, անվերջ  
Ես կարծում եմ ինձ միայնակ:

Երբ մտնում եմ հայոց վանքեր,  
Թէ ճոխ ու շէն, թէ աւելրակ,  
Պաշարում են ինձ սև մտքեր՝  
Ես կարծում եմ ինձ միայնակ:

Կ Ե Ա Ն Ք Ի Պ Ա Տ Կ Ե Բ Բ Ը.

Ա Շ Խ, տուէք ինձ թուղթ ու գրիչ՝  
Կեանքը գրի անցնելու  
Բանաստեղծի մի ոյժ դիւթիչ՝  
Կեանքը մարդկանց ցոյց տալու:

Մի կողմ նայէք,—ուրախութիւն  
Եւ անտարբեր, անհոգ կեանք,  
Իսկ միւս կողմում վիշտ, տերութիւն  
Ու դառնազին տառապանք:

Եւ երբ կեանքը մոայլ գոյնով  
Երևում է մեր աչքին,  
Այն ժամանակ նրա տեսքով  
Վշտանում է մեր հոգին:

Վ Ճ Տ Տ Ա Լ Ի Ս Ա Ի Բ Ը.

Սիրոս լցվեց վշտերով,—  
Նա է այժմ վշտալի.  
Սիրոս լցվեց վէրքերով,—  
Նա է այժմ վիրալի:

Կայուն առ կայուն  
Գլուխ առ գլուխ  
Խազով ուժուն առ  
Օվան օվայուն:

Վարդուն առ վարդուն  
Հայուն առ հայուն  
Թափուկ առ թափուկ  
Օվան օվայուն:

Ի Մ Վ Կ Ի Ճ Ա Կ Բ.

Դարձեալ նոյն գիշեր,  
Դարձեալ նոյն վիճակ,  
Անցեալի յուշեր—  
Դառը, դժնդակ...

Սահում են, թռչում  
Կեանքի անիւներ  
Եւ անհետ կորչում  
Թանկագին ժամեր:

Եւ դու, բնութիւն  
Ամենակարող,  
Տնւր բացատրութիւն  
Մտքիս որոնող:

~~+~~ ԿԵԱՆՔԻ ՈՎԿԻԱՆՈՍԸԸ.

Կեանքի անհուն ովկիանոսում  
Ալիքներն են անվերջ հոսում,  
Ուր լողում են բախտաւորներ  
Եւ միշտ խեղդվում շատ թշուառներ:

այս—միշտ դժոջ ապրուց է այս  
պատշաճ մեջութ ու այս  
համարաբար պարու սերպ  
անխայութ այս ամեն ու այս

ամենու ու այս ամերտեսուի լուս  
ամենու ու այս ամերդու շաման  
— այս ամենու մաս ուստի ու  
այս ամեն այս այս այս այս

այս ամեն ու այս ամերտեսու  
ու ամեն այս ամերդու համար  
— այս այս ամեն ու այս  
այս ամերդու մաս ու այս

Հ Ա Յ Ո Ւ Ո Ւ Յ Ե Զ.

Անբախտ աղքի դռւ, հէկ կրթիչ,  
Բաղմաչարչար հայ ուսուցիչ,  
Դէմքով նիհար, միշտ տիրամած,  
Լուռ տանջվում են՝ մտքով լարված:

Եթէ կարդաս գրքեր հին—նոր,  
Քեզ կը կանչեն խելացնոր.  
Որպէս «գրքից խելագարված»՝  
Դու կը լինես միշտ հալածված:

«Հայ վարժապետ» քեզ կը կանչեն,  
Մինչ գերեզման քեզ կը տանջեն.  
Կը լինես «ծակ վիլիսոփայ»,—  
Ցուրտ ու տաքի միշտ ենթակայ:

Հագիւր հին շոր և ոչ թէ նոր,  
Քաղցած անցրու դու ամեն օր.  
Պէտք է ապրել ոչ լոկ հացով,—  
Հայն այդ գիտէ ճարպիկ խելքով:

Մէջքիդ կաղած ստամոքսով,  
Գիշեր—ցերեկ հացի հոգսով,—  
Ունես դու միշտ դատարկ գրապան,  
Ուր միներն են լոկ պահպան:

Թէպէտ լինես դու շատ գիտուն,  
Չես ունենայ հանգիստ մի տուն,—  
Գլխիդ համար հանգիստ անկիւն,  
Որտեղ գտնես քաղցր մի քուն:

Հայութեան հարժ բարձր  
իշխան պատ քաղաք—ովակ  
մարդ խոսուր ոչըն առ ամեն  
մարտաւոր այլ օճ մարդի զայ

**Հ Ա Յ Բ Ե Ն Ի Գ Ե Տ Ա Կ.**

Տիուր գետակդ իմ հայրենի,  
Վազիր դէպ' ծոց քո մայրենի.  
Հանիր կոհակ, վազիր առաջ  
Եւ տար քեզ հետ սրտիս հառաչ:

Ս Ո Ս Կ Ա Լ Ի Զ Մ Ե Ռ.

**Մի ցուրտ ձմեռ վրայ հասաւ...**  
**Մեր մտքերը սառեցին.**  
**Կեանքը մեզնում դադար առաւ**  
**Եւ սրտերը մարեցին:**

Խոր քուն տիրեց մեր ուղեղին,  
Թմրութիւնը մեղ պատեց,  
Եւ մեր կեանքի դարնան ժամին.  
Ամլութիւնը մեղ յաղթեց:

**Բայց ուր կորան մեր իղձերը,**  
**Նախկին հուրը մեր արեան**  
**Եւ ոսկեգոյն վառ յոյսերը,—**  
**Երակները մանկութեան:**

Ա՛ռ քնարդ, արթնւն երգիչ,  
Մեղ երգ ասա, տաքացրնւ.  
Վառիր դու մեղ երգով դիւթիչ  
Եւ խոր քնից զարթնեցրնւ:

Թնդ բուրբոքի հուրը նորից  
Մեր այս սառած մտքերում  
Եւ թնդ եռայ կեանքը նորից  
Մեր սառցապատ սրտերում:

Ա. Շ Խ Ա. Բ Հ.

Ս. շ ա մ ր հ , ա շ խ ա ր հ , ու ն ա յ ն ա շ խ ա ր հ , —  
Ա ր տ ա ս ո ւ ն ք ի մ ի ա ղ բ ի ւ ր .  
Ա շ խ ա ր հ , ա շ խ ա ր հ , փ շ ն տ ա շ խ ա ր հ ,  
Տ ա ն ջ ա ն ք ն ե ր դ ե ն բ ի ւ ր ՚ի բ ի ւ ր :

Հ Ա Ր ՈՒ Ւ Տ Ը Ն ՈՒ Ա Ղ Ք Ա Տ Ը Հ .

Մ ի օ ր ե ր գ ի չ ը ի ր տ ա ւ ի ղ ն ա ռ ա ւ ,  
Գ ն ա ց՝ հ ա ր ս տ ի դ ո ւ ն կ ա ն դ ա ռ ա ւ ...  
Ա պ ա ե ր կ ի ւ ղ ո վ մ տ ա ւ ն ե ր ս , կ ա ն դ ն ե ց ,  
Խ փ ե ց ք ն ա ր ի ն և ե ր գ ե լ ո ւ ղ ե ց .  
Դ ե ռ ն ո ր լ ա ր ե ր ը գ ո ղ տ ր ի կ հ ն չ ե ց ի ն ,  
Ե ր գ չ ի ն կ ո պ տ ո ւ թ ե ա մ ը դ ո ւ ր ս վ ո ն դ ե ց ի ն :

Ն ա կ ո տ ր ա ծ ս ր տ ո վ ա յ դ փ ո ղ ո ց ն ա ն ց ա ւ ,  
Մ ի գ ե ղ ե ց կ ո ւ հ ո ւ դ ո ւ ն մ օ տ ե ց ա ւ .  
Ե ր գ ե ց վ շ տ ա գ ի ն և ս ր տ ա մ ո ր մ ո ք ,  
Բ ա յ ց , ա ւ ա ղ , դ տ ա ւ մ ի հ ա յ ե ա ց ք ա ն հ ո գ ...  
Ն ա ա յ դ վ ա ր մ ո ւ ն ք ի ց ս ա ս տ ի կ վ ր դ ո վ վ ա ծ ՝  
Վ հ ա տ ք ա յ լ ե ր ո վ հ ե ռ ա ց ա ւ , գ ն ա ց :

Ա պ ա մ օ տ ե ց ա ւ ա ղ ք ա տ ի դ ո ւ ն ա ,  
Մ ի վ ս տ ա հ հ ա յ ե ա ց ք պ ա շ ա ր ե ց ն ր ա ն ...  
Ա ն ե ր կ ի ւ ղ ա ն ց ա ւ ա ն շ ո ւ ք դ ո ն ա կ ի ց՝  
« Խ ե ղ ձ ի ն » ա ն ե լ ո ւ ի ր ա ն վ շ տ ա կ ի ց .  
Բ ա կ ո ւ մ հ ա ն դ ի պ ե ց ն ա խ ե ղ ա ղ ք ա տ ի ն ,  
Պ ա տ ր ա ս տ լ ս ե լ ո ւ ի ր վ շ տ ո տ ե ր գ ի ն :

Ե ր գ ի չ ը ե ր գ ե ց ,  
Ա ղ ք ա տ ը լ ս ե ց :

Երգն էր մելամաղձ և յուսակտուր,  
Աղքատին թւաց անչափ քաղցրալուր,  
Երբ լսեց նրա երգի դայլայլներ՝  
Յիշեց իր կեանքի ծանօթ վայրկեաններ.  
Սիրեց նա երգչին, նրան վայխայեց,  
Ոչինչ նրանից նա չը խնայեց:

Երգչի տաղանդը նա գնահատեց  
Եւ իր վարմունքով նրան խրատեց.  
«Զը զիմել անգութ հոգով աղքատին,  
Այլ միշտ սրտաբաց հոգով հարստին»...  
Երգիչն աղքատից անչափ դոհ մնաց  
Եւ ուրախ սրտով հեռացաւ, գնաց:

Խեղճ քնարերգուն մի լաւ խրատվեց,  
Նոր այդ ժամանակ միայն ըմբռնեց.  
«Հարուստն է հարուստ միայն իր փողով,  
Իսկ հէտ աղքատը՝ սիրազեղ հոգով»:  
Երգվեց՝ չը զիմել երբէք հարստին,  
Այլ միշտ սրտաբաց, թշուառ աղքատին».

1902թ.

Ո Ւ Ա Ն Ո Ղ.

Քանի նա գեռ ուսանող էր,  
Ազնւութիւն սերմանող էր.  
Բայց երբ մտաւ նա ասպարէզ,  
Պաշտել սկսեց գծուծ իր «հս»:

Հպարտ—հպարտ նա քայլելով  
Եւ իր անձը միշտ շոյելով  
Ման էր գալիս ուսանողը,  
Շլացնելով իր չորս կողմը:

«Ուսանող եմ»,—ասում էր նա,  
Երբ հարցնէին, թէ ով է նա,—  
«Իդէաների միշտ անձնատուր.  
Այս է ձիրքը մեր բնատուր»:

Անա մտաւ նա ասպարէզ.  
Բայց սկզբից խեղճը, կարծես,  
Տեղ է փնտրում հանգստութեան,  
Ուր գործելու կար լայն շրջան:

Թռան նրա վեհ իդէաներ,  
Եռուն կեանքի մեծ խոստումներ,  
Հանգաւ նրա հուր—եռանդը  
Եւ նա դարձաւ նոյն սոսկ մարդը:

1889թ.

ՈՒՍԱՆՈՂԻ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ.

Մեռար և գնւ, ով ուսանող,  
Դեռ կեանքի մէջ ոտ չը դրած  
Եւ գիտութիւն, լոյս սերմանող  
Իդէալներդ չ'իրագործած:

Քո վրայ էր ազգիդ յոյսը,  
Ծնողներիդ սին ապագան,  
Բայց մահն անգութ մարեց լոյսը  
Եւ մի հոգի անզուգական:

Անքուն հոգիդ գերեզմանից  
Միշտ կը լսի ողբ, սուգ ու լաց  
Եւ կ'ողբակցի իր տապանից,  
Եթէ իրօք նա չէ մեռած:

1889 թ. Երեւան:

Կ Ե Ա Ն Ք Ի Ա Ն Ի Ի Ը.

Աահում է, գնում,  
Մեր կեանքի անիւ,  
Երբէք չի յոզնում  
Եւ տալիս հաշիւ:

Նա միշտ անսայթաք  
Պտոյտ է գալիս,  
Իսկ մենք լուսնի տակ  
Մեր վիշտն ենք լալիս:

1889 թ.

## Մ Տ Ա Ծ Մ Ո Ւ Ն Ք.

Գիշեր—ցերեկ մտածելով՝  
ես իմ օրերն եմ անցնում  
եւ իմ անզօր, թոյլ ոտերով  
կեանքի շաւղով ընթանում:

Դեռ ես անփորձ մի պատանի,  
կեանքի էջեր չը թերթած՝  
Անձնատուր եմ ես կոյր բախտի,  
Աչքս նրան ուենած:

Բայց քմահաճ այդ կոյր բախտը  
Անողոք է մշտական,  
Թէ որ դարձրեց նա իր դէմքը,  
ել մի սպասիր յաւիտեան:

1893 թ. Խոսկվա:

## Բ Ա Խ Տ.

Ո՞հ, անգնվթ բախտ, դու, փոխվող կիս,  
Արդեօք ինչ եմ արել ես քեզ,  
Որ իմ կեանքը պերճ, թանկագին  
Դարձրիր վշտի ծով փրփրագէզ:

Կեանքի բոլոր շրջաններում  
Անգթօրէն ինձ տանջեցիր,  
Եւ մինչև իսկ մօրս գրկում  
Սիրաս վշտով իսոր խոցեցիր:

Մտայ թէ չէ այս փուչ աշխարհ,—  
Տառապալից մի ասպարէզ,  
Չուրախացայ գէթ բաւարար,—  
Ինչնւ անբախտ ծնվեցի ես:

Զէ, չը փայլեց ջերմ արել  
Գէթ մի անգամ խեղճիս վրայ...  
Կարծես, մեր այս երկրի Տէրը  
Այդ վիճակեց ինձ անխնայ:

1889 թ.

Ա Ր Տ Ի Ա Խ Ո Յ Լ .

Սիրտս խոցվեց սաստիկ ուժգին  
Խոր խոցերով վշտագին.  
Ես լալիս եմ սրտիս խորքից  
Աղատվելու այդ վէրքից:

1890 թ.

ՀՈԳԵԿԱՆ ՓՈԹՈՐԻԿ.

Ո՞չ, հեծում է դժբախտ հոգիս  
Անհաւասար մի կռւում,  
Երբ նայում եմ յոյսի ասաղիս,  
Որ փայլում է շատ հեռուում:

Պատահում են վշտի ժամեր,—  
Քոռ փոթորիկ հոգեկան,  
Կտրատվում են սրտիս թելեր  
Ներքին կռւում մոլեկան:

Այդ ժամանակ ես վնասրում եմ  
Առանձնութեան խուլ տեղեր,  
Կամ թէ մէկին ես յայտնում եմ  
Իմ անհանգիստ, գոռ վշտեր:

Աշխատում եմ այդ միջոցով  
Վանել հեռու իմ վշտեր.  
Բնական է, որ այդպէսով  
Խաղաղվում են մեր սրտեր:

1890 թ.

Մ Ա Տ Ա Ղ Օ Ր Ե Բ.



Աւանդ, անցան մատաղ օլեր,  
Ուրքան անոյշ, որքան քաղցրիկ,  
Երբ դեռ ևս այս բիւր ցաւեր  
Զէին գրել սրտիս կնիք:

1890 թ.

Ա Ն Յ Ա Խ Ս Ո Խ Թ Ի Ւ Ե Ն.

Սայս բիրտ աշխարհում մենք տեղերելով՝  
Մտածում ենք, թէ ապրելն է իզուր,  
Երբ մեր յոյսերը դերեւ ենելով՝  
Թռչում, գնում են, չը գիտենք, թէ ուր:

Մենք յուսահատված այդ հանգամանքից՝  
Այս ճոխ աշխարհն ենք ունայն համարում,  
Որ մեր ոսկեգոյն անթիւ յոյսերից  
Գէթ քչերն էլ չեն իրականանում:

Իզուր ենք մենք միշտ մեզ հանգստացնում,  
Մոայլ մտքերը հեռու մղելով.  
Այն, իզուր ենք մեզ մսիթարում,  
Կեանքի ծովի մէջ անվախ լողալով:

Որքան ապրում ենք, այնքան համոզվում,  
Որ ունայն է մեր համայն բնութիւն.  
Ծանք մտքերի մէջ ենք մենք սուզվում,  
Ունայն կարծելով և մեր գոյութիւն:

1890 թ.

Գ Ռ Ի Զ .

Կոտրվիր, գրիչ,  
Թէ երգ հմայիչ  
Զես կարող գրել,  
Սրտեր հմայել:

Կոտրվիր, գրիչ,  
Թէ երգ գրաւիչ  
Զես կարող գրել,  
Սրտեր գրաւել:

Կոտրվիր, գրիչ,  
Թէ տողեր թովիչ  
Զես կարող գրել,  
Եւ սրտեր գերել:

Կոտրվիր, գրիչ,  
Թէ տողեր դիւթիչ  
Զես կարող գրել,  
Մաքերին տիրել:

ՄԵԾ ՄԱՐԴԿԱՆՑ ԳՐՎԱԾՆԵՐԸ.

Ամեն անգամ, երբ կարդում ենք  
Մենք մեծ մարդկանց գրվածներ,  
Այն ժամանակ մեզ կարծում ենք  
Նրանց նման գրողներ:

1891 թ.

Կոստվի՞ր, գրի՞չ,  
Եթէ կախարդիչ  
Չես կարող գրել,  
Սրտեր կախարդել:

Կոստվի՞ր, գրի՞չ,  
Եթէ զմայլիչ  
Չես կարող գրել  
Եւ սրտեր փխրել:

Կոստվի՞ր, գրի՞չ,  
Եթէ հրապուրիչ  
Չես կարող գրել,  
Սրտեր խորտակել:

ՀՕՐՄ ՎԵՐՋԻՆ ՀԱՄԲՈՅՑՔ.

Տուեց համբոյր վերջին անգամ  
Իմ հարազատ ծնող հայր...  
Ես ուր գնամ, որտեղ մանգամ,  
Բանտ է աշխարհն ինձ համար:

Ես այս օրից թափառում եմ  
Անօթևան թռչնի պէս.  
Օտար երկրում տեգերում եմ,—  
Կեանքս արդէն եղաւ կէս:

Դեռ չեմ գրել ես տուն ու տեղ  
Ըստանեկան յարկի տակ,  
Թափառում եմ անտուն—անտեղ  
Անհիւրընկալ երկնի տակ:

1900 թ. Թէհրան:

Հ Ա Գ Ո Ւ Հ Ա Յ Ե Լ Ի Ւ Ն.

Անվերջ դառը մտածմունքներ  
Եւ լուս, անքուն, ժանտ գիշերներ  
Բնկերներս են միշտ, շարունակ՝  
Լի տխրութեամբ մեծաքանակ:

Սիրտս է տխուր և վշտահար,  
Դէմքս՝ մոայլ և դալկահար.  
Ո՞հ, իմ սիրտը դու մի՛ քննիր,  
Դէմքիս վրայ նրան փնտրիր:

Դէմքն է հոգու պարզ հայելին,  
Այնտեղ գտիր քո ուզածին.  
Միշտ նայելով մարդու դէմքին,  
Այնտեղ կարդա նրա հոգին:

Վ Շ Տ Ս Ա Լ Ի Օ Ր Ե Ր.

~~Ճ~~ Թանգ այս վշտալի,  
Դառնագին օլեր  
Լցնեն թունալի  
Կեանքիս բաժակներ, —  
Դնեն իմ սրտին  
Կնիք վշտաբեկ,  
Բայց իմ վեհ հոգին  
Զի լքի երբէք:

Հ Ա Գ Ե Կ Ա Ն Պ Ա Յ Ա Ւ Ր.

Ել մի սփոփիր, եղբայր, բաց թող,  
թոնդ իմ սիրտը վշտանայ.  
Չը կայ կեանքում մի վեհ կոթող,  
Որով սիրտս հիանայ:

Զէ, այլ ևս չեմ երազում  
Ապրել հաճգիստ, փառաւոր,  
Այլ «յաղթել» եմ ևս լոկ ուզում  
Իմ վշտերին բիւրաւոր:

Եւ այսուհետ թող փոթորկվեն  
Իմ վշտերը մոլեգին,  
Հեծեն, զոռան, իրար զարկվեն  
Եւ խոռվեն իմ հոգին:

Սակայն փոյթ չէ. որոշեցի  
Կուի դուրս գալ նրանց հետ,  
Կուով միայն վճռեցի  
Զարդել նրանց մինչ անհետ:

ԵՄ ՇԱՏ ՏԵՂԵՐ ԹԱՓԱՌԵՑԻ.

Ես շատ տեղեր թափառեցի  
Իմ չար բախտից հալածված,  
Ամեն տեղ էլ հանդիպեցի  
Թշուառութեան ծովացած:

Մինչև այգօր կարծում էի,  
Միայն ես եմ միշտ տանջվում.  
Անգութ վշտից, չը գիտէի,  
Որ քչերն են ազատվում:

Ով սառնասիրտ կարծում է, թէ  
Միայն ինքն է միշտ տանջվում,  
Զար վշտերից, նա չը գիտէ,  
Շատ քչերն են ազատվում:

Մի վհատվէք, տանջվնդ սբտեր,  
Հոգի առէք, ապրեցէք,  
Հեռու մղէք ձեր թոյն վշտեր,—  
Նրանց իսպառ մոռացէք:

Այս աշխարհը մեղ չի մնայ, —  
Մենք հիւր կը գանք ու կ'երթանք,  
Կեանքը կը գայ ու կը գնայ,  
Որպէս մահի նախերգանք:

1901 թ. Բօրժութ

Կ Ե Ա Ն Ք Ի Փ Ո Ւ Զ Հ .

Կրել կեանքի մէջ անվերջ տանջանքներ,  
Տանել նենդ մարդկանց խաբերայութիւն  
Վայելել յաճախ անթիւ զրկանքներ,—  
Սա է համարվում մեծ փորձառութիւն:

Դիմանալ յաճախ քաղցի—ծարաւի,  
Տանել նենդ մարդկանց անարդարութիւն  
Ենթարկվել նրանց ծաղր ու ծանակի,—  
Սա է համարվում մեծ փորձառութիւն:

Տանել նենդ մարդկանց դաւեր ու խաղեր  
Կրել հալածանք և շատ նեղութիւն,  
Անցնել յուսահատ, թախծալի ժամեր,—  
Սա է համարվում մեծ փորձառութիւն:

Կոյր բախտի ձեռքին լինել խաղալիք,  
Կրել վիշտ, թախիծ, կեանքի դառնութիւն  
Վատանզի ժամին լինել դասալիք,—  
Սա է համարվում մեծ փորձառութիւն:

Թողնել տուն ու տեղ և սիրելիներ,  
Շքեղ բնութիւն, կապուտակ երկինք,  
Անուշ օդ ու ջուր, վճիտ աղբիւրներ,  
Լեռներ ու ձորեր,—քաղցր հայրենիք.

Այսպէս ակամայ թողնել ամեն ինչ,  
Վարել պանդուխտ կեանք, կրել անձկութիւն,  
Կեանքի զրկանքներն համարել ոչինչ,—  
Սա է համարվում մեծ փորձառութիւն:

Թողնել հայրենի գեղ դաշտ ու արօտ,  
Դիմել հեռու տեղ, դէպ' պանդխտութիւն,  
Քաշել սիրելու աղեկէղ կարօտ,—  
Սա է համարվում մեծ փորձառութիւն:

Լինել կեանքի մէջ հէտ թափառական,  
Չունենալ դադար և հանգստութիւն,  
Բախտից հալածված, ինչպէս ուրուական,—  
Սա է համարվում մեծ փորձառութիւն:

Չունենալ կեանքում գէթ մի կարեկից,  
Որ պարապ դէպքում գտնէր քեղ մի գործ,  
Կամ վշտի ժամին լինէր վշտակից,—  
Սա է կեանքի մէջ համարվում մեծ փորձ:

Վարել ամուրի, մի ցուրտ, դաժան կեանք  
Եւ սիրոյ համար թափել արցունքներ,

ԽՈՐՏԱԿՎԱԾ ՍԻՐՏ.

Աւեր շէնքից ինձ մի բեկոր  
Անգթաբար մերժեցին...  
Խղճուկ սիրտս կտոր-կտոր,  
Հիմնայատակ արեցին:

Այս, այն օրից վշտոտ սիրտս,  
Սընան մի մեծ ծով գարձած՝  
Կաշկանդել է ուշ ու միտքս,  
Սիրոյ վէրքից խորտակված:

Իմ վէրքերը սիրոյ խոցից  
Այնքան արագ բազմացան,  
Որ երգերս նրանց համից  
Սյսլէս սաստիկ դառնացան:

Որին պատմեմ ես անսահման  
Եւ բազմաթիւ իմ վշտեր.  
Որին պատմեմ ես անգարման,  
Անբուժելի իմ վէրքեր:

Ո՞րտեղ գտնեմ սիրտ զգայուն,—  
Ականջ դնի երգերիս,  
Դարման անի և քայքայուն,  
Անբուժելի վէրքերիս:

1902 թ. Թիֆլիս:

Նբա պատճառով կրել շատ տանջանք,  
Սրանք են կոչվում կեանքի մեծ փորձեր:

Հալ ու մաշ եղած քաշել չարքաշ կեանք,  
Ժանու հիւանդութիւն, անաջող գործեր,  
Դրանց հետ կապված անվերջ տառապանք,  
Սրանք են կոչվում կեանքի մեծ փորձեր:  
1902 թ. Թիֆլիս:

Ք Ա Ր Ո Ւ Ն.

---

Գարունը եկաւ,—ամեն ինչ ծաղկեց,  
Բայց նա վիրաւոր սիրտս չը սփոփեց.  
Տեսան, ինդացին կենսուրախ մարդիկ,  
Միայն ուրախ չեն բախտի խորթ որդիք:

Իմ գլխի վերև՝ ջինջ երկնակամար.  
Այստեղ արևը փայլում է պայծառ.  
Բայց նա չէ փայլում, կարծես, ինձ համար  
Ինչու է արդեօք սիրտս վշտահար:

Կանաչ պարտէզում սոխակն է երգում,  
Բայց նրա երգն էլ ինձ չէ սփոփում.  
Կարծես, ինձ ոչինչ սփոփելու չէ.  
Չը գիտեմ, ինչու սիրտս ուրախ չէ:

1901 թ. Հաղպատ

Գ Ե Ր Ե Զ Մ Ա Ն Ա Տ Ա Ն Հ.

---

Մի լուսընկայ պարզ գիշեր էր,  
Շուրջս խաղաղ ու հանգիստ.  
Կապոյտ ծովում մեղմ լողում էր  
Արծաթ լուսինն անհանգիստ:

Լուսնի լուսով փայլում էին  
Բնդ միշտ հանգած շիրիմներ,  
Նրանց վրայ քայլում էին  
Գիշերային ոգիներ:

Նրանց մէջ էր իմ սիրուհին,—  
Ես կամեցայ մօտենալ.  
Սակայն նրա վեհ տիրուհին  
Նշան տուեց հեռանալ:

Նա ինձ թւաց մի ուրուական,  
Դէմքով գունատ, վշտահար,—  
Գիշերային թափառական,  
Լուռ վայրերի սիրահար:

Խորհրդաւոր այդ լուռ ժամին  
Սաստիկ երկիւղ ինձ պատեց.  
Բայց մի ցնցում նոյն վայրկեանին  
Ինձ վտանգից ազտեց:

1900 թ. 26-ն օգոստոսի.  
Երեւան,

Ա Տ Ա Յ Յ Յ Ա Զ Ա Դ Գ

Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ  
ԽՈՐՏԱԿՎԱԾ ՅՈՅՍ.

Ես վառ յուսով ձգտում էի  
իմ դրութիւնից բարձրանալ,  
Եւ ողջ ուժով ուղղում էի  
Ազատ կեանքի տիրանալ:

Բայց ասպարէղ ինձ վիճակվեց,  
Որպէս անջուր անապատ.  
Ձգտումներիս ուղին փակվեց,  
Ինչպէս մի սկրմ փշապատ:

Ազատ կեանքս, ոհ, կաշկանդված՝  
Ես լողում եմ «վիշտ» ծովում,  
Մի թռչուն եմ ես բանտարկված  
Իմ անազատ վանդակում:

Մենք չենք կարող ընդդիմանալ  
Ինչ որ մեզ է վիճակվում,  
Եւ օձ-վշտից շուտ հեռանալ,  
Երբ նա մեզ է հանդիպում:

1895 թ. 16-ն նոյեմբերի.  
Քօթօմ:

Դաձնյալ միայն նվ լավ  
Չեն Արև-քառամբ չ նորու  
Դմիջդիմ կրտսայ դան  
Վարիսն աւշին ո՛ւ նորուն

ԽԱՆԴԱՎԱԾ ՀԱՍՍԿ.

Կար ժամանակ, որ ես էլ  
Իղէաներով առգործված՝  
Ուղում էի կեանք մտնել՝  
Վառ յոյսերով բորբոքված:

Եւ այդպէս էլ ես մտայ  
Կեանքի փշու ասպարէղ,  
Ուր սկզբից հէնց գտայ  
Տառապանքի մի մեծ դէղ:

Ողջ ոյժերս լարեցի՝  
Կուել ահեղ, քաջայոյս,  
«Մութ գիշերին», ասեցի,  
«Կը յաջորդէ արշալոյս»:

Սակայն իմ այդ յոյսերը  
Նմանում են նաւակի,  
Որին կեանքի յոյզերը  
Բնդհարվում են շեշտակի:

Իսկ իմ նաւակն անվեհեր  
Լողում է կեանք—ծովի մէջ,  
Ուր կատաղի ալիքներ  
Մոնչում են միշտ, անվերջ:

Բայց տարիներն անցնելով՝  
Անցնում են և իմ ոյժեր,  
Իրանց հետը տանելով  
Եւ բոցավառ, իմ յոյսեր:

1898 թ. 7-ն հոկտեմբերի

Երեւան:

Ա Ն Տ Ա Ր Բ Ե Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն .

Ասէք, ի՞նչ փոյթ ուրիշներին,  
Թէ մենք տանջվենք անարդար.  
Ասէք, ի՞նչ հոգ անսիրտներին,  
Թէ վշտանք անդադար:

Կեանքի կուի ասպարէզում  
Մարդն՝ անձնատուր իր եսին,  
Տանջանքներով այրում, կիզում,  
Խորովում է միշտ միւսին:

Ով որ վշտով չի համակվել  
Եւ անհոգ է ապրել միշտ,  
Ով իր կեանքում վիշտ չի կրել,  
Նա չը գիտէ, ի՞նչ է վիշտ:

Ասէք, ի՞նչ փոյթ անհոգներին,  
Թէ մենք մտնենք գերեզման.  
Ասէք, ի՞նչ հոգ անսիրտներին,  
Թէ մենք մեռնենք յաւիտեան:

1899 թ. 15-ն յունիսի  
Երեւան:

ՍԻ ԱՐ ՋՈՅՑ ԱՐՑՈՒՆՔ. 5 Տ.

Մի զոյդ արցունք ես քամեցի  
Քո սէգ, հպարտ աչերից,  
Հանգստանալ ես ուղեցի  
Քո պատճառած վշտերից:

Զը կարծես, թէ անգութ էի՞ւ  
Որ ես այդպէս արեցի,  
Այլ իմացիր, խոցված էի՞ւ  
Որ ես այդպէս վարվեցի:

Դարձաւ ինձ այն ծանր միջիշտ  
Որ դու ինձնից հեռացար.  
Խորտակելով կեանքս ընդ միշտ  
Դու ինձ իսպառ մոռացար:

1900 թ. Թէհրան:

Դ Ե Պ Ի Դ Ե Ա Լ Ն Ե Բ Ռ.

Տուէք թեր, որ սլանամ  
Իդէալների վեհ աշխարհ,  
Իդէալական որ ես դառնամ,  
Հէգ մարդկութեան բարերար:

Կեանքն է գծուծ և զզվելի,  
Մարդիկ՝ գաճաճ, նիւթապաշտ,  
Բամբասակը անպատմելի  
Եւ միմեանց հետ միշտ անհաշտ:

Եւ քանի որ դեռ չէ անցել  
Կեանքիս սիրուն, թարմ գարուն,  
Տուէք միջոց խոր թափանցել  
Իդէալների մէջ եռուն:

Ես նրանցով կ'ուղեմ ասլըել  
Եւ յագեցնել իմ իդեր,  
Նրանցով էլ կեանք ներշնչել  
Եւ պատել շատ անձեր:  
1898 թ. 30-ն հոկտեմբերի.  
Երեւան:

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ.

Մեռար և դու, ծեր Նահապետ,  
Հայ դպրութեան հսկայ վարպետ,  
Բայց վաստակդ չէ աննշան,  
Ո՞վ դու Ղեռնդ Հայր—Ալիշան:

Ո՞հ, չքացար, հայ գրական,  
Հսկայ տաղամդ անզուգական.  
Բայց քո գործը չէ աննշան,  
Ո՞վ դու Ղեռնդ Հայր—Ալիշան:

Մահը խլեց, ոհ, քեզ ընդ միշտ  
Եւ պատճառեց մեզ ծանր վիշտ.  
Բայց քո մահը չէ աննշան,  
Ո՞վ դու Ղեռնդ Հայր—Ալիշան:

Աւերակի դու, հէտ երգիչ,  
Ընդ միշտ լոեց երգդ դիւթիչ.  
Բայց բանաստեղծ չես աննշան,  
Ո՞վ դու Ղեռնդ Հայր—Ալիշան:

Դու, անձանձիր հայ հնախօս,  
Այժմ դարձար ընդ միշտ անխօս.  
Բայց հնագէտ չես աննշան,  
Ո՞վ դու Ղեռնդ Հայր—Ալիշան:

Ո՞հ, սլացար, քաջ հայկաբան,  
Եւ հնախնյզ ատենաբան.  
Բայց հայագէտ չես աննշան,  
Ո՞վ դու Ղեռնդ Հայր—Ալիշան:

Ո՞հ, սնջեցիր, ծեր Նահապետ,  
Միսիթարեան ժիր վարդապետ.  
Բայց հայ ուարբի չես աննշան,  
Ո՞վ դու Ղեռնդ Հայր—Ալիշան:

Դու կանգնեցրիր քեզ մի արձան,  
Որ կը լինի մեզ յուշալձան.  
Անմահութեան այդ քեզ նշան,  
Ո՞վ դու Ղեռնդ Հայր—Ալիշան:

Թհղ սաւառնի՛ անմահ հոգիդ  
Եւ խունկ ծխեն յիշատակիդ.  
Անմահութեան այդ է նշան,  
Ո՞վ հանձարեղ Հայր—Ալիշան:

Ես համակված անհուն վշտով  
Երգ հիւսեցի տխուր սրտով.  
Արդ ձօնում եմ երգս աննշան  
Յիշատակիդ, Հայր—Ալիշան:  
1901 թ. 17-ն նոյեմբերի.  
Թիֆլիս:

առաջնութեան ամառ պատմական առաջնութեան ամառ  
առաջնութեան ամառ պատմական առաջնութեան ամառ  
առաջնութեան ամառ պատմական առաջնութեան ամառ  
առաջնութեան ամառ պատմական ամառ

## Ք Ա Ի Ն.

Ա ն, ինչ կը լինէր, որ վշտի ժամին,  
կեանքից վերացնող ինձ մի քուն պատեր  
եւ իմ անդարման, անվերջ ցաւերին,  
Որպէս բալասան, մի դարման անէր:

Հէզ անցորդ եմ ես անցաւոր կեանքում՝  
Քմահաճ բախտի դժբախտ խաղաղիք.  
Մտքով շրջում եմ ես միշտ տիեզերքում,  
Ուզում եմ գտնել մեր կեանքի զաղտնիք:

Նայելով մանկան՝ մտածում եմ ես,  
«Մի լար, դու, մանուկ. Ժամ չէ քեզ լալու  
Քո անմիտ կեանքում գեռ շատ կը ստիպվի  
Ծանր հոգսերից խոր լաց լինելու»:

«Կեանքի խաղերին անդէտ քո հոգին  
Լալիս է այժմ չը հասկանալով.  
Կը գայ ժամանակ, և այն վշտագին,  
Երբ լաց կը լինի միշտ հաշիւ տալով»:

1901 թ. Սանահինք

## Ք Ա Վ Ի Շ Ը Ը.

Ես կարդում եմ քո ճակատին  
Հոգուդ դառը փոթորիկ.  
Վիշտ մօտ է և իմ սրտին,—  
Ես կրկի եմ նոյն մրրիկ:

Անգութ լախտի դառը հարված  
Դրեց դէմքիդ իր կնիք,  
Որտեղ այժմ սիրոս լարված  
Գտնում է մի խոր գաղտնիք...

Ել չեմ տեսնում ես քո դէմքին  
Նախկին գոյնը այտերիդ.  
Քոթորկված է հոգիդ ուժվին,  
Չը կայ փայլը աչքերիդ:

Զը կայ ժախտ մտերմական,  
Քո այդ վշտերն ամոքող.  
Զը կայ և սէր պլատոնական,  
Քո այդ կեանքը նորոգող:

Բայց մի լինիր գու յուսահատ,  
Ել նմանիր մեր Փրկչին.  
Գուցէ քո այդ կեանքը վհատ  
Մի նիւթ կը տայ քո երգչին...

1903 թ. Թիֆլիս

ԿԵՍՆՔԻՄ ԵԴԱՆՑԿՆԵՐԸ.

Երբ որ եկաւ կեանքիս գարուն,  
Ես ծաղկեցի ինչպէս վարդ,  
Որ կազմում է այնքան սիրուն  
Ծաղկանոցի չքնաղ գարդ:

Երբ որ եկաւ կեանքիս ամառ,  
Դարձայ հասուն, ովաղաւէտ,  
Աշխատեցի ես միշտ յամառ  
Լինել աղգիս օդտաւէտ:

Սակայն հասաւ կեանքիս աշուն,  
Թառամեցի ես արդէն.  
Այդպէս թօշնեց վարդը նախշուն,  
Երբ որ հասաւ իր վաղէն:

Կը գայ նաև կեանքիս ձմեռ,  
Ես կը մտնեմ հողի տակ,  
Չը կայ ոչինչ երկրում անմեռ,—  
Հողն է վերջին յիշատակ:

Կը գայ նորից մի վառ գարուն,  
Կը բողբոջի մի նոր վարդ.  
Սակայն, աւաղ, այդ նոր տարուն  
Ես կը լինեմ ննջող մարդ:

Ինձնից յետոյ կեանքը գարձեալ  
Պայտ կը գայ իր շաւզով.  
Նա, կարծես, թէ չ'ունի անցեալ,  
Ընթանում է այդ կարգով:

Թէսէտ ննջեմ անզարթ քնով  
Խոնաւ ու սառ հողի տակ,  
Բայց ես կ'ուղեմ կեանքիս զնով  
Թողնել բարի յիշատակ:

1902 թ. Թիֆլիս:

Մ Ա Հ Ի Ց Ս Ա Ց Ե Տ Ո Յ Շ .

—

Թէ չքանամ, անհետ կորչեմ  
Այս աշխարհից յաւիտեան,  
Իմ երկերում ես գեռ կ'ապլեմ,  
Որպէս նշան զոյութեան:

Թէ չէք գտնի այս աշխարհում  
Դերեզմանիս հետքն անդամ,  
Դուք վինարեցէք իմ երկերում,  
Ես ձեր աչքին կ'երևամ:

Երկն է որպէս մի հայելի  
Հեղինակի մաքերի,  
Հեղինակը թէև չը կայ,  
Բայց նա նրան ցոյց կը տայ:

1904 թ. Եկատերինօդար:

Ա Ի Ա Ն Դ .


Անհուն վշտի զգացմունքով  
Իմ երկերը զրեցի  
Եւ նրանց մէջ ջերմ արցունքով  
Խղճուկ սիրոս թաղեցի:


Ես թողեցի նրանց աւանդ  
Մեր ապագայ սերնդին.  
Ուր կը գտնի նա արձագանք  
Իր տառապող, հէզ սրտին:

Երբ որ անվերջ տանջվող մտքեր  
Իմ երկերը կը թերթեն,  
Այստեղ նրանց տխուր սրտեր  
Արցունքներս կը գտնեն:

1904 թ. 25-ն մայիսի.

Եկատերինօդար:





Գրարուն	.
Մանկութիւն	.
Հայրենիքից հեռանալիս	.
Հսկայ ծառը.	.
Գետի ափին.	.
Մեծ մարդկանց կանքը.	.
Գիշերօթիկ պարոցից գուրս զալուց յետով.	.
Ս. Գէորգի վանքում	.
Անցած օրեր	.
Պանդխառովեան մէջ	.
Իմ հրաժեշտը	.
Կեանքի ծովը	.
Յուղված սիրտս	.
Այգու մէջ	.
Իմ քնարին	.
Ամպամած երկինք.	.
Աղբեկրի մօտ	.
Սիրահարի յուշատեսքից.	.
Օտարութեան մէջ.	.
Ես չեմ երգում	.
Վշտիս թոյնը	.
Ուսուցիչ	.
Մեած կեանք	.
Հողանիթիս քայլայումը	.
Տխուր մտածմունք	.
Հին տարի	.
Նոր տարի	.

	Կրես.
Ունայնութիւն	34
Կուգէի լինել մի արջիկ հողի	35
Իմ թախիծը.	36
Իմ լացը	37
Ուսուցչի հրաժեշտը	38
Իմ սիրտը	39
Թոյլի տապահագիրը	40
Վշտիս բեռը	41
Յոյն	42
Ես հեռացայ հայրենիքից	43
Անհանգիստ հողի	44
Խելագարին.	46
Կեանքի վերջալոյսը	47
Բախտի հալածանքը	48
* Նուէր օրիորդ Ա. ին.	49
Մեսած ընկերիս զագաղի առաջ	50
Գարուն	52
Ես կարծում եմ ինձ միայնակ	53
Կեանքի պատկերը.	54
Վշտակի սիրտ	55
Իմ վիճակը	56
Կեանքի ովկիանոսը	57
Հայ ուսուցիչ	58
Հայրենի գետակ	60
Սոսկալի ձմեռ	61
Սշխարձ	62
Հարուստն ու աղքատը	63
Ուսանող	65
Ուսանողի տապահագիրը	66
Կեանքի անիւը	67
Մտածմունք.	68
Բախտ	69
Սրտիս խոյը	70
Հոգեկան փոթորիկ	71
Մտած օրեր	72

Անյուսութիւն . . . . .  
 Մեծ մարդկանց գրվածները  
 Գրիչ . . . . .  
 Հօրու վերջին համբոյրը  
 Հոգու հայելին . . . . .  
 Վշտպի օրեր . . . . .  
 Հոգեկան պայքար . . . . .  
 Ես շատ տեղեր թափառեցի  
 Կեանքի փորձը . . . . .  
 Խորտակված սիրտ.  
 Գարուն . . . . .  
 Թերեզմանատանը . . . . .  
 Խորտակված յոյս . . . . .  
 Խանդավառ հասակ  
 Անտարբերութիւն . . . . .  
 Մի զոյգ արցունք . . . . .  
 Դէպ' իդէալներ . . . . .  
 Հ. Ղ. Ալիշանի յիշատակին  
 Քուն . . . . .  
 Բո վիշտը . . . . .  
 Կեանքիս եղանակները . . . . .  
 Մահիցս յետոյ . . . . .  
 Աւանդ.

(1889—1904թ.)



Ba. - Im.

Ma. - Fo.

ՀՀ Ազգային գրադարան



NL0323750

22749

